Հաճախորդների հայտերի դասակարգումը.

- Շուկայական հանձնարարական - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով անմիջապես Արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով.
- Գնման/վաճառքի լիմիտային հանձնարարական - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ Պատվերում ֆիքսված գնից ոչ բարձր (ոչ ցածր) գնով Արժեթուղթ գնելու (վաճառելու) պայմանով.
- Գնման/վաճառքի ստոպ հանձնարարական - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում (Արժեթղթերի առք/վաճառք)՝ Պատվերում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ Արժեթղթի գինը հասնելու դեպքում.
- Գնման/վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը միաժամանակ ներառում է Գնման (վաճառքի) լիմիտային հանձնարարականը մի գնով և Գնման (վաճառքի) ստոպ հանձնարարական մեկ այլ գնով.